# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 18 (1468) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 22, 2010
VOLUME 30, NO. 18 (1468) SATURDAY, MAY 22, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՏԽՈՒՐ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԸ ԱՌԻԹՈՎ
## ԱՌ՝ ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ***

Ուղիղ տարի մը անցաւ այն չարաշուք օրէն, երբ մահուան գերանդը անակնկալօրէն հնձեց մեր շարքերէն, «Մասիս» շաբաթաթերթի հիմնադիր խմբագիրներէն՝ ընկ. Յարութիւն Սաղրեանի կեանքը: Ան իր մահով խոր սուգի մատնեց իր ընտանեկան պարագաները, թատերական, երաժշտական եւ գրական բարեկամ շրջանակները, եւ վերջապէս իր գաղափարական մեծ ընտանիքը, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը:

Իր դառնաղէտ մահով, իր ընտանիքը կորսնցուց սիրալիր ամուսին մը, նուիրեալ հայր մը, հոգեկից խորհրդակից մը, որ ոչինչ խնայեց պահպանելու համար իր օճախի ազգային աւանդապահ դիմագիծը: Այդ գծով, խօսուն ապացոյցներ էին իր ընտանեկան յարկէն ներս իր կազմակերպած գրական, մշակութային եւ ընկերային բնոյթի յաճախակի դարձած հաւաքոյթները, ուր կը մէկտեղուէին մեր գաղութէն ներս վարկ վայելող մշակոյթի նուիրեալ արուեստագէտ-արուեստագիտուհիներ, գրողներ, ազգային գործիչներ եւ այլ հիւրեր, որոնք սատար կը հանդիսանային հայապահպանման պայքարին զօրացման:

Իր բարեկամ շրջանակները կը կորսնցնէին բարեժպիտ, անմիջական ու զուարթաբարոյ ընկերակից մը, որուն ներկայութիւնը հաճելին՝ օգտակարին միախառնող շաղախ կը դառնար ամէնուրեք:

Թատերական շրջանակը, Սաղրեանի մահով կը կորսնցնէր իր մէկ շնորհալի դերասանը: Երաժշտական ընկերակցութիւններ՝ իրենցմով խանդավառ երաժշտասէրն ու օժանդակ մէկ անձնաւորութիւնը: Պահանջատիրութիւնը կամ բողոքի քայլարշաւները՝ իրենց առաջին գծի վրայ կանգնող պատկառելի ցուցարար մասնակից մը: Սգաւորները՝ իր դամբանականներով եւ աւուր պատշաճի քերթուածներու արտասանութիւններով մխիթարող հոգեկից մը: Այո, իր բարեկամ շրջանակները կը կորսնցնէին բարեժպիտ, անմիջական ու զուարթաբարոյ ընկերակից մը, հարազատ մը, որուն ներկայութիւնը հաճելին՝ օգտակարին, սուգը՝ յոյսին միախառնող մղում կը դառնար ամէնուրեք:

Սաղրեան առանց բացառութեան աչքի զարնող ներկայութիւն էր միշտ, գաղութէս ներս գործող միութիւններու ազգային, քաղաքական, գրական, թատերական, երա-

***Տար.ը էջ 19***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐԸ ԱՊՕՐԻՆԻ ԿԵՐՊՈՎ ՆԵՐԳՐԱՒՈՒԱԾ ԵՆ ՄԱՐՏ 1-Ի ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ



***Բանակի զրահապատ մեքենաները Երեւանի հրապարակներուն վրայ՝ Մարտ 2, 2008***

*2008-ի Մարտի 1-ի իրադարձութիւնները ուսումնասիրող, լուծարուած փաստահաւաք խումբի ընդդիմադիր անդամները Երեքշաբթի, Մայիս 17-ին հրապարակած են զեկոյց, ուր կ'եզրակացուի, որ նախքան Ռոբերդ Քոչարեանի «Արտակարգ դրութիւն յայտարարելու մասին» հրամանագրի վաւերացումը, Հայաստանի զինուած ուժերը ներգրաւուած են ներքաղաքական իրադարձութիւններուն մէջ:*

*2008 թուականի Մարտի 1-2-ի իրադարձութիւնները ուսումնասիրող փաստահաւաք խումբի նախկին ընդդիմադիր անդամներ՝ Անդրանիկ Քոչարեանի եւ Սեդա Սաֆարեանի զեկոյցը կը փաստէ, որ Պաշտպանութեան նախկին նախարար Միքայէլ Յարութիւնեանի 0038 խիստ գաղտնի հրամանով զինուած ուժերու բազմաթիւ ստորաբաժանումներ Մարտի 1-ին դուրս բերուած են իրենց տեղակայման հիմնական վայրերէն եւ տեղափոխուած՝ մայրաքաղաք ու մօտակայ վայրեր: Զեկոյցին մէջ Անդրանիկ Քոչարեան եւ Սեդա Սաֆարեան կը յայտարարեն, որ փաստահաւաք խումբէն ներս իրենց գործունէութեան ընթացքին հայ-*

***Տար.ը էջ 4***

## ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՉԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ 5000 ՀԱՅԵՐ Կ'ԱԿՆԿԱԼՈՒԻՆ

*Թրքական «Փրեսթիժ» թերթը հարցազրոյց մը հրատարակած է Վանի մշակոյթի տնօրէն Ջէքի Թաշքանի հետ, որուն ընթացքին ան խօսած է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ ուխտագնացութեան մասին, որ ծրագրուած է Սեպտեմբերին: Կը յայտնուի, թէ Վանի պանդոկները անբաւարար են կատարելու համար Վան գալիք հայերու հիւրընկալութիւնը, որովհետեւ կը կարծուի, թէ հազարաւորներ Վան պիտի գան այս առիթով:*

*Այն հարցումին, թէ Թաշքան ի՞նչ նախատեսութիւն ունի Աղթամարի ուխտագնացութեան մասին, ան կը պատասխանէ, որ իր ենթադրութեամբ, 5000 հայեր Վան պիտի գան ուխտագնացութեան համար: «Ուխտագնացները 2-3 օր առաջ Վան պիտի գան եւ առիթը պիտի ունենան պտըտելու նաեւ Վան քաղաքին մէջ: Այժմ ժողովներ պիտի կատարուին մանրամասնութիւնները ճշդելու համար. օրինակ, այս բազմութիւնը Աղթամար կղզի փոխադրելու համար բաւարար նաւ կա՞յ, թէ չկայ, կամ թէ ինչպիսի՞ կէտերու վրայ է, որ դժուարութիւններ կրնան ստեղծուիլ:*



*Ուխտագնացութեան օրերուն պիտի լուսաւորուին Աղթամարի եկեղեցին ու Վանի բերդը: Ծրագիր կը մշակուի, որ Աղթամարի եկեղեցւոյ լուսաւորումը կատարուի արեւի ուժով: Այս ծրագիրը պիտի իրականանայ ուխտագնացութեան թուականէն առաջ»,- ըսած Թաքշամ:*

## ԱԼԻԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸ ՄԵՂԱԴՐԷ ԺԱՄԱՆԱԿ ՇԱՀԵԼՈՒ ՄԷՋ

*Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ Երեքշաբթի, Մայիս 18-ին յայտարարած է թէ, պատրաստ է բանալու սահմանը, եթէ Հայաստան համաձայնի ընդունիլ Մինսկի Խումբի համանախագահներու առաջարկած ծրագիրը:*

*«Եթէ Հայաստան դրական պատասխանէ Մատրիտեան սկզբունքներու նորացուած տարբերակին եւ սկսի հայկական զօրքերու դուրսբերումը ատրպէյճանական տարածքներէն, ապա Ատրպէյճան կը բանայ բոլոր սահմանները ու հաղորդակցութեան ուղիները», - ըսած է Ալիեւ Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Էրտողանի հետ Պաքուի մէջ կայացած միատեղ ասուլիսի ընթացքին:*

*Ալիեւ ըսած է որ, Ատրպէյճան համաձայն է նորացուած Մատրիտեան սկզբունքներուն՝ մի քանի բացառութիւններով եւ կ'ակնկալէ, որ հայկական կողմը եւս նոյնը ընէ:*

*«Նոր առաջարկները ներկայացուած են վեց ամիս առաջ, բայց մինչեւ հիմա Հայաստան դրական պատասխան չէ տուած: Մենք կը տեսնենք, որ դա ժամանակ շահելու փորձ է, քանի որ անոնք չեն կատարեր կարեւոր քայլեր խնդիրը լուծելու համար եւ բանակցութիւնները կը դարձնեն յաւերժական գործընթաց», - յայտարարած է Ալիեւ՝ պնդելով, թէ խաղաղ գործընթացի առանցքային պահերուն Հայաստան միշտ ալ խափանած է բանակցութիւնները:*

*«Եթէ Հայաստան դրական պատասխան տայ, կողմերը կը մօտենան խնդրի լուծման, եթէ ոչ՝ բանակցային գործընթացը կը տապալուի», - յայտարարած է Ատրպէյճանի նախագահը:*

*Ռեճէփ Էրտողանի Պաքու կատարած այցելութեան առթիւ թրքական մամուլին մէջ լոյս տեսած են հրապարակումներ, որոնց համաձայն Թուրքիոյ վարչապետը կը փորձէ համոզել Ատրպէյճանի ղեկավարին՝ եօթը շրջաններու փոխարէն բաւարարուիլ երկու շրջաններէ հայկական զօրքերու հեռացումով:*

*«Եթէ նոյնիսկ Պաքուի վարչակազմը հանրութեան ուղղուած իր յայտարարութիւններուն մէջ կ'ընդգծէ, թէ «5+2» բանաձեւէն ետքայլ պիտի չընէ, այդուհանդերձ, 2 շրջաններու հարցի առնչութեամբ կը շարունակուին քննարկումները: Այդ երկու շրջաններն են Քելբաջարը եւ Ֆիզուլին», կը գրէ թրքական «Հիւրրիյէթ» թերթը:*

*«Հիւրրիյէթ» այս առթիւ կ'ընդգծէ նաեւ, որ եթէ Երեւանը հրաժարի ընդունիլ Ղարաբաղի յարակից շրջաններու հետ կապուած նոր առաջարկութիւնը, հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը կրնայ շատ երկար ժամանակ սառեցուած մնալ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԿԱՐԿՈՒՏԸ ԾԵԾԱԾ ՏԵՂՆ Է ԾԵԾՈՒՄ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

Տարիներ առաջ, երբ հոլիվուդեան ֆիլմերում ցուցադրւում էին ԱՄՆ սեւամորթ նախագահներ, դրանք ընկալւում էին որպէս ֆանտաստիկայի ժանրը ներկայացնող ստեղծագործութիւններ: Յետոյ Ամերիկան ունեցաւ առաջին սեւամորթ հրամանատարը՝ ի դէմս գեներալ Քոլին Փաուելի, ով ղեկավարում էր ամերիկեան ռազմարշաւը՝ «Փոթորիկ անապատում», Սադդամ Հուսէյնինին քշելով Քուվէյթից: Յետոյ ԱՄՆ ունեցաւ իր առաջին սեւամորթ պետքարտուղարը՝ ի դէմս նոյն գեներալ Փաուելի: Յետոյ ԱՄՆ ունեցաւ իր առաջին սեւամորթ նախագահը՝ ի դէմս ծագումով քենիացի Պարաք Օբամայի: Մի քանի օր առաջ ԱՄՆ ունեցաւ իր առաջին արաբ գեղեցկուհին՝ ի դէմս լիբանանցի 24-ամեայ էմիգրանտ Ռիմա Ֆակիհի, ով նուաճեց «Միսս ԱՄՆ-2010» տիտղոսը:

Կարծես թէ նկատելի է, թէ կինոն ինչպէս է տարէցտարի Ամերիկայում դառնում իրականութիւն: Գաղտնիք չէ, որ ամերիկեան, հոլիվուդեան կինոարտադրութիւնը ԱՄՆ քարոզչական հզօր գործիքներից մէկն է, որով փորձ է արւում որոշակի արժէքներ, մթնոլորտ, մտածողութիւն ձեւաւորել թէ սեփական երկրում, թէ դրա սահմաններից դուրս: Ու երբ դիտարկում ենք ԱՄՆ պետական ընթացքը, ապա արձանագրում ենք, որ դա նպատակներ, արժէքներ սահմանելու եւ պետական ու հասարակական ճկունութեան շնորհիւ արագ վերափոխուելու, այդ արժէքների կենսագործման հասնելու, պահը, ժամանակը բաց չթողնելու մի օրինակ է, որ դրւում է ի ցոյց աշխարհի: Այլ կերպ ասած, ԱՄՆ հռչակում է արժէքներ եւ իր կեանքի ընթացքով տէր է կանգնում դրանց:

Արժէքներ հռչակում են շատ երկրներ, շատ պետութիւններ, շատ էլիտաներ: Օրինակ, եթէ փորձենք վեր հանել այն արժէքներն ու նպատակները, որ հռչակուել են Հայաստանի անկախութիւնից ի վեր, երեւի թէ դրանք կը բաւականացնեն 10 կամ 20 Ամերիկաների պատմութեան: Բայց երբ փորձում ենք դիտարկել, թէ հռչակուած արժէքներից քանիսին է տէր կանգնել Հայաստան պետութիւնը, ապա տեսնում ենք, որ 20 տարուայ մէջ ձեւաւորուած հիմնական «արժէքները» բացարձակապէս կապ չունեն հռչակուածների հետ:

Անշուշտ, Ամերիկայի Միացեալ Նահանգներն էլ իր կազմաւորման եւ ձեւաւորման առաջին տասնամեակներին գուցէ աւելի լաւ վիճակում չի եղել, քան Հայաստանն այժմ: Աւելին, գուցէ առաւել վատ վիճակում է եղել: Բայց ախր ժամանակակից պետութիւն կառուցելու առումով ամերիկացիներին օրինակ ցոյց տուող չի եղել, ուրիշների սխալ չի եղել, որից հնարաւոր կը լինէր դասեր քաղել: Չեն եղել նախադէպեր, չեն եղել պետականաշինութեան գիտական աշխատութիւններ, չի եղել համաշխարհային փորձ, չի եղել օգնութիւն՝ դրամաշնորհների, վարկերի, Սփիւռքի տեսքով: Թէեւ միգուցէ հենց դրանում է եղել ԱՄՆ աջողութեան գրաւականը որպէս պետութիւն: Միգուցէ երբ այդ ամէնը չկայ, տուեալ հասարակութիւնը, տուեալ ժողովուրդը կամ էթնոսը ստիպուած միտք է զարգացնում, միտքն է գնահատում, հասկանում եւ գնահատում է ինտելեկտի եւ գիտութեան իրական արժէքը, ոչ թէ դրանց քարոզչական փոխարժէքը:

Եւ այդ ամենով հանդերձ, ու անկախ այդ ամէնից, միեւնոյն է, հայութեան պարագայում այն դիտարկումը, թէ մենք նոր ենք պետութիւն կառուցում եւ պէտք չէ համեմատուել այլոց, այդ թւում Ամերիկայի Միացեալ Նահանգների հետ, կրկին այդքան էլ հիմնաւոր չէ: Բանն այն է, որ մենք պետութիւն ունեցել ենք Ամերիկայից հազարամեակներ առաջ: Բայց նրանք 200 տարում դարձել են աշխարհի ամենահզօր պետութիւնը, իսկ հայութիւնը ոչ միայն չի հզօրացել, այլ կորցրել է թէ պետականութիւնը, թէ նուազել է թուաքանակով, թէ տարածքով, թէ ռեսուրսներով: Ու դրա պատճառը մեր շուրջը հիւսուած հակահայկական դաշինքներն ու նուաճող հարեւանները չեն, մեր աշխարհագրական վատ դիրքը չէ, ինչը ներշնչւում է սերնդէ սերունդ, արմատաւորելով այն գաղափարը, թէ ամբողջ աշխարհը հայերի դէմ էր աշխատում, դրա համար էլ մենք այդքան փոքրացանք ու կոտորուեցինք, մեզ խաբեցին, մեզ դաւաճանեցին:

Ու այդպէս, տարիների ընթացքում, տնտեսական, քաղաքական, հոգեւոր եւ մտաւորական «էլիտաների» հետեւողական եւ յամառ աշխատանքի շնորհիւ ձեւաւորուեց այն ազգային հոգեբանութիւնը, որ մեր դժբախտութիւնների բուն պատճառը մեր վատ աշխարհագրական դիրքն ու մեր Թախծոտ աչքերն էին, որոնք կատաղութեան էին հասցնում մեր մօտ ու հեռու հարեւաններին: Բոլորն ու ամէն ինչ պատճառ էին, միայն ոչ մենք, ոչ մեր սխալները, ոչ մեր մտաւոր տկարութիւնը, սահմանափակութիւնը, մեր էլիտաների կաղապարուած մտածողութիւնը, որից երբ այդ էլիտաների ներկայացուցիչներից ոեւէ մէկը դուրս է եկել, շատ արագ հասել է յաջողութեան, բայց յաջողութիւնն էլ շատ կարճ է տեւել, որովհետեւ շատ արագ դարձել է «ազգային" հոգեբանութեան զոհ՝ բառի բուն եւ պատկերաւոր իմաստներով: Այդ հոգեբանութիւնն ամենից յարմարն էր այդ բոլոր էլիտաների համար, որովհետեւ նրանց ազատում էր պատասխանատուութիւնից, հասարակութեան առաջ ունեցած պատասխանատուութիւնից: Այդ հոգեբանութեան խորացումը շարունակւում է մինչեւ այսօր, երբ իշխող «էլիտաները» որեւէ հանրային գործողութիւն բնորոշելիս, գնահատելիս կամ հիմնաւորելիս ելման կէտ են ընտրում արտաքին թշնամու կերպարը՝ «թշնամուն չօգնենք» կամ «թշնամուն չուրախացնենք» տարբերակով, երբ նոյն այդ «էլիտաներին» ուղղուած որեւէ հասարակական պահանջ հետ է մղւում հենց այդ տարբերակներով:

Ազգային այդ հոգեբանութիւնն է պատճառը, որ Հայաստանի հասարակութեան եւ քաղաքական շրջանակների գերակշիռ մասն աւելի կարեւոր են համարում ոչ թէ այն, թէ ինչ է կատարւում Երեւանում, Գիւմրիում, Կապանում կամ Բարեկամաւանում, այն, թէ ինչ են քննարկում Մեդվեդեւը կամ Գիւլը, Օպաման եւ Էրդողանը, Մեդվեդեւն ու Օպաման: Հասարակութեան եւ քաղաքական շրջանակների գերակշիռ մասը Հայաստանի ճակատագիրը կապում է ոչ թէ Հայաստանի Հանրապետութիւնում առկայ իրավիճակի, այստեղ ընդունուող որոշումների եւ ձեռնարկուող լուծումների, այլ համաշխարհային մայրաքաղաքներում կայացուող հանդիպումների հետ: Եւ այդ մտայնութիւնը ոչ միշտ է, որ թելադրուած է պարզապէս ներքին խնդիրներից ուշադրութիւն շեղելու մղումով: Ամենեւին, պարզապէս հասարակութեան զգալի մասի մտածողութիւնը կոդաւորուած է հենց այդպէս, որ մեր ճակատագիրը, մեր յաջողութիւններն ու անյաջողութիւնները պայմանաւորուած են ոչ թէ մեր մտքով, կամքով, մեր արժէհամակարգով եւ աշխարհընկալմամբ, դրանից բխող գործողութիւննե-

*Շար.ը էջ 19*

# ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ՞ ԽԱՐԴԱՒԱՆՔ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

Արդէն մի քանի ամիս խօսւում են իշխանութեան ներսում պատրաստուող դաւադրութեան մասին: Բնականաբար, որպէս պալատական յեղաշրջման առաջնորդ՝ նշւում է Ռոբերդ Քոչարեանի անունը: Ըստ այդմ, հաշուի են առնւում նախկին նախագահի անձնական առանձնայատկութիւնները եւ 12 տարի առաջ նրա կողմից հրահրուած դաւադրութեան յաջողուած փորձը: Ինքը՝ Քոչարեանը, այդ լուրերը հերքել է, բայց դա արել է իրեն յատուկ ոճով՝ յետոյքային հիւանդութեան յիշատակմամբ: Դա, ինչ խօսք, իջեցրեց նրա յայտարարութեան արժէքը. որքան զուսպ է խօսքը, այնքան ազդեցիկ է այն, այնքան լուրջ է ընկալւում: Հաւանաբար, ճիշդ կը լինի, որ նրանք, ովքեր կասկածւում են այդ դաւադրութեանը մաս կազմելու մէջ, նոյնպէս հերքեն այդ խօսակցութիւնները, եթէ դրանք սուտ են (ինչպէս արեց Սամուէլ Բաբաեանը), կամ, եթէ ճիշդ են, հաստատեն այդ տեղեկութիւնները՝ ասելով, որ, այո, իրենց աւելի ձեռնտու է, որ նախագահ լինի Քոչարեանը, եւ բացատրեն, թէ ինչու:

Իհարկէ, տեսականօրէն ամէն ինչ հնարաւոր է: Բայց ուզում եմ ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրել այսօրուայ եւ 98-ի իրավիճակների տարբերութեան վրայ: Պալատական յեղաշրջումն այն ժամանակ է յաջողւում, երբ նրա մասնակիցները ռէալ իշխանութիւն ունեն, ինչպէս եւ տեղի էր ունեցել 12 տարի առաջ: Ռէալ իշխանութիւնն այսօր նախագահի, կառավարութեան եւ ամենակարեւորը՝ ուժային կառոյցների ձեռքն է: Կա՞յ որեւէ նշան, որ դրանց ղեկավարները պատրաստ են դաւաճանել նախագահին եւ իրենց երդմանը: Ինձ թւում է՝ այս պահին նման նշաններ չկան:

Բայց թէ ինչու են այդ խօսակցութիւններն առաջացել՝ միանգամայն բացատրելի է: Ընդդիմութիւնն, իհարկէ, շահագրգռուած է նման լուրերի տարածման մէջ՝ ցոյց տալու համար, թէ որքան թոյլ է ներկայիս իշխանութիւնը, եւ որքան խորն են դրա ներսում հակասութիւնները: Բայց եթէ նոյնիսկ մի կողմ դնենք այդ հանգամանքը, պէտք է արձանագրել. մենք պատրաստ ենք հաւատալ այդ լուրերին այն պարզ պատճառով, որ քաղաքական գործունէութիւնը Հայաստանում զգալիօրէն վարկաբեկուել է, եւ որեւէ տեղաշարժի հնարաւորութիւն մարդիկ տեսնում են միայն՝ որպէս ներիշխանական «մուտիլովկաների» արդիւնք:

Այսօր քաղաքական գործունէութեամբ զբաղւում է միայն Հայ ազգային կոնգրեսը: Ճիշդ թէ սխալ, խելացի թէ անխելք? այդ միաւորման գործունէութիւնը քաղաքական է, բաց, հրապարակային: Մնացածը, ներառեալ Դաշնակցութիւնը, զբաղուած են խարդաւանքներով: Պատճառը, եթէ կարճ ձեւակերպենք, հետեւեալն է. Նրանք, ովքեր իշխում էին անկախ Հայաստանի առաջին 7 տարիներին, խիստ տարբերւում են նրանցից, ովքեր իշխանութիւն ունէին եւ հարստացել են 1998-2008 թուականներին: Չնայած առաջինների մէջ նոյնպէս կային յանցագործներ եւ թալանչիներ, այնուամենայնիւ, այդ երկու խմբերը «սարքած են տարբեր խմորներից»: Լեւոն Զուրաբեանը կամ Ալեքսանդր Արզումանեանը կարող են քաղաքական դիրքորոշում յայտնել: Բայց դուք պատկերացնո՞ւմ էք, որ, ասենք, Վարդան Այվազեանը դուրս գայ իշխանութեան դէմ: Նրան իսկոյն կը յիշեցնեն իր բոլոր հանքերը եւ դրանց հետ կապուած մեղքերը: Ահա թէ ինչու գործիչների այդ «համաստեղութեանը» մնում են միայն խարդաւանքները:

*«ԱՌԱՒՕՏ»*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
**MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104**

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ՅԱՆԿԱՐԾԱՄԱՀ Է ԵՂԵԼ «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»-Ի ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ ՀԱՄԼԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԸ

*«Հոկտեմբերի 27-ի» գործով մահանում է արդէն երրորդ դատապարտեալը. երկու օր առաջ յանկարծամահ է եղել Համլետ Ստեփանեանը:*

*2000 Թուականի Օգոստոսի 29-ին դեռ գործի նախաքննութեան փուլում, Նուբարաշէնի մեկուսարանում մահացաւ «Հոկտեմբերի 27»-ի գործով ամբաստանուող Նորայր Եղիազարեանը: Ըստ դատաբժշկական փորձաքննութեան՝ նա մահացել էր 220 վոլտ հոսանքից: Թէեւ որոշ այլ պնդումների համաձայն, նրա գլխին եղել էին հարուածի հետքեր: Նա Նաիրի Յունանեանի խմբին զէնք վաճառած անձն էր, որն այդպէս էլ դատարան չհասաւ:*

*2004 Թուականի Ապրիլի 16-ին իր խցում կախուած գտան ոճրագործների քեռուն՝ ցմահ դատապարտուած Վռամ Գալստեանին, որն իրեն բաւականին տարօրինակ էր պահում, եւ մահից առաջ սկսել էր յայտարարութիւններ անել ահաբեկչութեան հետ կապուած եւ այլն: Մահից առաջ նա իբր խնդրել էր իրեն տեղափոխել առանձին խուց, որովհետեւ չի համակերպւում իր խցակիցների հետ, իսկ մեկուսարանի ղեկավարութիւնը մեծ սիրով բաւարարել էր նրա խնդրանքը: Յաջորդ օրը նրան յայտնաբերել էին կապուած, իսկ քրէակատարողական հիմնարկների վարչութեան պետ Սամուէլ Յովհաննիսեանն այն ժամանակ յայտարարեց, թէ նա յաճախ է ինքնասպանութեան փորձեր արել:*

*Իսկ Մայիսի 15-ին յանկարծամահ է եղել Համլետ Ստեփանեանը, որն ի տարբերութիւն միւսների, դատապարտուել էր ոչ թէ ցմահ, այլ 14 տարուայ ազատազրկման եւ շատ մօտ ապագայում պէտք է յայտնուէր ազատութեան մէջ: Նա անմիջականօրէն չէր մասնակցել Ազգային Ժողովի նիստերի դահլիճում տեղի ունեցած իրադարձութիւններին, այլ սպասել էր դրսում: Համլետ Ստեփանեանը միացել էր ահաբեկիչներին 1999Թ Հոկտեմբերի 27-ի առաւօտեան:*

*«Այս առումով վստահ եմ, որ իրական կազմակերպիչների մասով Համլետ Ստեփանեանը տեղեկութիւններ չի ունեցել, սակայն նաեւ համոզուած եմ եւ ասել եմ, որ Ստեփանեանը տեղեկութիւններ ունեցել է այն ուժերի մասին, որոնք պէտք է միանային սպանութիւնները կատարելուց յետոյ,-«Ա1+»-ի հետ զրոյցում ասաց Դեմիրճեանների շահերի ներկայացուցիչ Աշոտ Սարգսեանը:-Այդ առումով Համլետ Ստեփանեանի մահը ձեռնտու էր այն մարդկանց, ովքեր սպասում էին ոճրագործներից Դերենիկ Բեջանեանի զանգին, որպէսզի միանային ոճրագործներին»:*

*Աշոտ Սարգսեանը սպասում է դատաբժշկի եզրակացութեանը, թէեւ վստահ է, որ պաշտօնական վարկածը լինելու է ճիշդ այնպէս, ինչպէս Վռամ Գալստեանի դէպքում: Եւ այստեղ Սարգսեանը կարեւորում է իրաւապաշտպանների դերը, որոնք պէտք է հետամուտ լինեն մահուան իրական հանգամանքների բացայայտմանը:*

*Իսկ արդեօք Նաիրի Յունանեանի եւ միւսների կեանքը եւս վտանգուած չէ՞, հաշուի առնելով, որ արդէն 3 հոգի տարբեր հանգամանքներում մահացել են՝ մեր հարցին Աշոտ Սարգսեանը պատասխանեց. «Մի օր էլ կարող է Նաիրի Յունանեանին մահացած գտնեն, բայց դա արդէն կը խօսի իշխանութեան հնարաւոր փոփոխութեան մասին»: Ըստ նրա՝ գործող իշխանութիւնը չի հեռանայ, քանի Նաիրի, Կարէն Յունանեանները եւ Էդիկ Գրիգորեանը ողջ են.«Որովհետեւ նոր իշխանութիւնը հենց նրանց միջոցով պէտք է պարզի Հոկտեմբերի 27-ի իրական կազմակերպիչներին»:*

*Յիշեցնենք, որ 1999 Թուականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Յունանեանի զինուած յանցախումբը, ներխուժելով խորհրդարանի նիստերի դահլիճ, գնդակահարեց 8 պետական գործիչների՝ Ազգային Ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանին, վարչապետ Վազգէն Սարգսեանին, խորհրդարանի փոխնախագահներ Եուրի Բախշեանին եւ Ռուբէն Միրոեանին, պատգամաւորներ Արմենակ Արմենակեանին, Միքայէլ Քոթանեանին, Հենրիկ Աբրահամեանին եւ նախարար Լեոնարդ Պետրոսեանին:*

## ՀԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ «ԱՌՃԱԿԱՏՈՒՄՆԵՐ» Է ՏԵՍՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍՈՒՄ



*ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեան*

*Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) համակարգող Լեւոն Զուրաբեանի համոզմամբ, Հայաստանի իշխանութեան ներսում կան «ընդգծուած հակասութիւններ եւ առճակատումներ», որոնք «շատ արագ կը բացայայտուեն»:*

*«Ռեժիմը յայտնուել է փակուղու մէջ, յայտնուել է անելանելի վիճակում, նրա ներսում խորանում են առճակատումները», - լրագրողների հետ հանդիպմանը ուրբաթ օրը յայտարարեց Զուրաբեանը՝ շարունակելով. - «Շատերը հենց ռեժիմի ներսում կորցրել են իրենց հաւատը առ այն, որ Սերժ Սարգսեանը ի վիճակի է ապահովել նրանց կերակրատաշտի անվտանգութիւնը, ապահովել այս իշխանութեան շարունակականութիւնը: Այդ պատճառով սկսուել է գզվռտոց, սկսուել են անյաղթահարելի հակասութիւններ:Եւ ես կարծում եմ, որ դրանք շատ արագ կը բացայայտուեն՝ շատ աւելի տեսանելի, շօշափելի ձեւերով»:*

*Կոնգրէսի համակարգողի կարծիքով, իշխանութիւնները «անելանելի վիճակում» են յայտնուել նաեւ արտաքին քաղաքական հարցերի պատճառով:*

*«Հայաստանը այսօր աննախադէպ արտաքին քաղաքական ճնշումների տակ է, ֆուտբոլային դիւանագիտութեան տապալումը բերել է Ղարաբաղեան հարցում Հայաստանի վրայ ճնշումների ուժեղացմանը եւ միայն խորացնում է անելանելիութեան վիճակը Սերժ Սարգսեանի ռեժիմի համար», - պարզաբանեց նա:*

*ՀԱԿ-ը շարունակում է պնդել, որ առկայ իրավիճակում միակ ելքը արտահերթ ընտրութիւններն են:*

*«Իհարկէ, ամենաճիշդը կը լինէր նախագահական արտահերթ ընտրութիւններ անցկացնել, իսկ յետոյ նոր խորհրդարանական ընտրութիւններ: Բայց դա դոգմա չէ, պատրաստ ենք այդ հարցում գնալ կոմպրոմիսների», - ասաց Զուրաբեանը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԵԿՆԱԾՆԵՐԻ ԹԻՒԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է ԺԱՄԱՆԱԾՆԵՐԻ ԹԻՒԸ

*«Զուարթնոց» եւ «Շիրակ» օդանաւակայաններով Հայաստանից մեկնած ուղեւորների թիւն այս տարուայ Յունուար-ապրիլին գերազանցել է ժամանածների թիւը:*

*Այս տարուայ Յունուար-ապրիլին «Զուարթնոց» օդանաւակայանն իրականացրել է 2 535 Թռիչք-վայրէջք՝ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի 2 260-ի փոխարէն: Ինչպէս տեղեկացնում է ՀՀ ԿԱ քաղաքացիական աւիացիայի գլխաւոր վարչութեան մամուլի ծառայութիւնը, վերոնշեալ ժամանակահատուածում օդանաւակայանով հանրապետութիւն ժամանել է 160 167, երկրից մեկնել է 205 644 մարդ: Նկատենք, որ այսպիսի տարբերութեան պատճառը կարող է լինել նաեւ արտագնայ աշխատանքի հետ կապուած սեզոնային էֆեկտը, քանի որ աւանդաբար հենց գարնան ամիսներին են մեր հայրենակիցները մեկնում արտագնայ աշխատանքի: Ի դէպ, անցեալ տարուայ նոյն ժամանակահատուածում Հայաստան ժամանել է 152 835 մարդ, իսկ մեկնել 184 214 մարդ:*

*Օդանաւակայանով առաքուած բեռների ծաւալն այս տարուայ 4 ամիսներին կազմել է 751 տ., ներմուծուածը՝ 1 557 տ.:*

*Այս տարուայ Յունուար-Ապրիլին Գիւմրիի «Շիրակ» օդանաւակայանն իրականացրել է 60 Թռիչք-վայրէջք:*

*Օդանաւակայանով Հայաստան ժամանել է 2 187, մեկնել է՝ 3 318 ուղեւոր:*

## ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՑԵԼՈՒ ՇՈՒՐՋ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ ԵՆ

*Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան մշակած օրինագիծը, որով հանրապետութիւնում հնարաւորութիւն է ստեղծւում հիմնել օտարալեզու դպրոցներ, կառավարութիւնն արդէն ուղարկել է Ազգային ժողով, դրա շուրջ քննարկումները, մինչդեռ, չեն դադարում:*

*«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը (ՀՀԿ) պարզաբանեց, թէ օտար լեզուներով դասաւանդումը նախատեսւում է միայն ասազ դպրոցների համար, բացի այդ՝ դրանք չեն լինի պետական դպրոցներ: Իսկ միւս հարցերը, ըստ նախարարի, նախատեսում էին կարգաւորել նորմատիւ ակտերով:*

*Անցած շաբաթավերջին խնդրի առնչութեամբ յայտարարութեամբ էր հանդէս եկել «Ժառանգութիւն» կուսակցութիւնը, որում, մասնաւորապէս, ընդգծուած է, որ Հայաստանում օտարալեզու դպրոցները կարող են լինել «միայն ոչ պետական» եւ «սահմանափակ Թուով ասազ դպրոցներ», որտեղ հայագիտական առարկաները պարտադիր կը լինեն Հայաստանի քաղաքացիների համար:*

*«Հայաստանի Հանրապետութիւնում պետական բիւջէով պէտք է ֆինանսաւորուեն հայերէն լեզուով դասաւանդող դպրոցները», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում համոզմունք յայտնեց «Ժառանգութեան» պատգամաւոր Անահիտ Բախշեանը՝ յաւելելով. - «Մենք չենք բացառում, որ ոչ պետական ասազ դպրոցները կարող են գործել Հայաստանի Հանրապետութիւնում օտար լեզուներով»:*

## «ՁԵՐ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՆԵՏԷՔ ԱՂԲԱՐԿՂԸ»

*2012 Թուականի ընտրութիւնների մեկնարկը տրուած է,-Մայիս 18-ին «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» ՀՀ օրէնքում փոփոխութիւնների նախագծի քննարկման ժամանակ յայտարարեց անկախ պատգամաւոր Վիկտոր Դալլաքեանը:*

*Նա հասկացել է օրինագծի բուն էութիւնը. «Քարոզչութեան ամենահզօր լծակը իշխանութիւնը վերցնում է իր վերահսկողութեան տակ»: Ըստ պատգամաւորի՝ այս օրինագծի մեխը հեռուստաընկերութիւններին թեմատիկ ուղղուածութիւնների բաժանելն է, որը սահմանափակում է մարդու տեղեկատուութիւն ստանալու իրաւունքը:*

*Նոյնաբովանդակ ելոյթ ունեցան նաեւ ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորները. Արմէն Մարտիրոսեանը պատահական չհամարեց, որ Թուային հեռարձակողների Թուի ընդլայնում հնարաւոր կը լինի 2013 Թուականից յետոյ. «Հենց այդ ժամանակ աւարտւում են խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնները, իսկ մինչ այդ ազատ հեռուստաընկերութիւններին ասում են, յոյս չունենաք, որ եթեր էք ստանալու, իրենց պէտք են հեռուստաընկերութիւններ, որ կը լուսաբանեն այնպէս, ինչպէս կը հրահանգեն Բաղրամեան 26-ում» (Նախագահական Պալատում Մ.):*

*«Սա ի՞նչ հրատապութիւն է, ինչո՞ւ է շտապում կառավարութիւնը»,-հարցրեց Ստեփան Սաֆարեանը: Նա զարմանում է, թէ ինչու էր պէտք մտածել 60 յօդուած, եթէ կարելի էր մէկ յօդուածում շարադրել կառավարութեան հիմնական նպատակը:*

*«Ես, որպէս պատգամաւոր իրաւունք ունեմ եւ պահանջում եմ, ետ վերցնել եւ նետել աղբարկղը այս օրինագիծը»,-ասաց Ստեփան Սաֆարեանը:*

# ԼՈՒՐԵՐ

## ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ ԽՕՍՈՒՄ Է ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ «ՌԱԶՄԱԿԱՆ» ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ատրպէյճանի գիւղատնտեսութեան նախարար Իսմատ Աբասովը, ով Երեւանում մասնակցում էր ՄԱԿ-ի Պարէնի եւ գիւղատնտեսութեան կազմակերպութեան համաժողովին, լրագրողների հետ հանդիպմանը անդրադարձել է ղարաբաղեան հակամարտութեանը:



Ատրպէյճանի գիւղատնտեսութեան նախարար Իսմատ Աբասով

«Ինչպէս ձեր, այնպէս էլ մեր ղեկավարները ցանկանում են, որ այդ հակամարտութիւնը լուծուի խաղաղ ճանապարհով, որպէսզի արիւն չթափուի, սակայն եթէ խաղաղ ճանապարհով այդ հարցը չլուծուի, ցաւօք սրտի, Ադրբեջանը կը սկսի փնտռել այլընտրանքային տարբերակներ, եւ չի բացառուի նաեւ ռազմական տարբերակը», - յայտարարել է Ատրպէյճան գիւղատնտեսութեան նախարարը:

Լրագրողների հարցերի մի մասին Իսմատ Աբասովը պատասխանել է ռուսերէն, իսկ մի մասին՝ հայերէն:

«Ալավերդեան փողոցում եմ ծնուել, դպրոցը աւարտել եմ Երեւանում, յետոյ ինստիտուտ եմ ընդունուել Պաքւում: Հայերէն խօսում եմ, բայց վաղուց չեմ խօսել, ռուսերէն որ պատասխանեմ, աւելի լաւ կը լինի», - պարզաբանեց Աբասովը ու խօսքը շարունակեց ռուսերէնով. - «Ասեմ, որ Երեւանը ինձ համար հարազատ քաղաք է. այստեղ ծնուել, մեծացել եմ: Շատ հաճելի է, որ հնարաւորութիւն եմ ստացել այստեղ գալ: Ատրպէյճանական եւ հայկական կողմերի համաձայնութեամբ հնարաւորութիւն եմ ունեցել այցելել ինձ համար հարազատ վայրեր՝ այն տունը, ուր մեծացել եմ, գիւղերը, որտեղ հանգստացել եմ ամռանը»:

Ատրպէյճանի գիւղատնտեսութեան նախարարը հայ-ատրպէյճանական հակամարտութեան թեմայով խօսել է նաեւ Հայաստանի քաղաքացիների հետ:

«Մարդիկ ուզում են, որ այս անախորժութիւնները արագ վերջանան: Օրինակ Սոթքում գիւղացիները, որ ինձ տեսան՝ շատ զարմացան: Ովքեր որ Ադրբեջանից էին տեղափոխուել, ասում էին՝ տեսնես կը գա՞յ այն օրը, որ մենք էլ գնանք մեր հողերը տեսնենք», - պատմել է Իսմատ Աբասովը:

## «ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՒԵԼԻ ԱԶՆԻՒ ԿԸ ԳՏՆՈՒԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՒՄ»

Մեծ Բրիտանիայի նոր կառավարութիւնը աւելի ազնիւ կը գտնուի Հայոց ցեղասպանութեանը վերաբերող հարցերում: «Ազատութիւն» ռադիոկայանին տուած բացառիկ հարցազրոյցում այսպիսի կարծիք յայտնեց իրաւաբան Ջեֆրի Ռոբերթսոնը, ով անցած Հոկտեմբերին հրատարակուած «Եղե՞լ է արդեօք հայերի ցեղասպանութիւն» ուսումնասիրութեան հեղինակն է:

Լոնդոնում գործող՝ մարդու իրաւունքներով զբաղուող անկախ կազմակերպութեան նախագահ աւստրալացի իրաւաբանն ապացուցել է, որ Հայերի ցեղասպանութիւնն անժխտելի փաստ է, իսկ Բրիտանիայի մերժողական քաղաքականութիւնը իրականում հիմքեր չունի: Աւելին, արտգործնախարարութիւնը երկար տարիներ թիւրիմացութեան մէջ է գցել երկրի ղեկավարներին:

«Ես ՄԱԿ-ի նախկին դատաւոր եմ, ու ես յստակ գնահատական եմ տուել 1915 թուականի դէպքերին. երբ նայում ես եղած փաստերին ու ցեղասպանութեան բանաձեւին, ապա ակնյայտ է դառնում, որ դա ցեղասպանութիւն էր: Այս փաստը իրաւաբանօրէն չի կարող հարցականի տակ դրուել», - ասաց Ռոբերթսոնը: - «Կարծում եմ՝ քաղաքական գործիչները հակուած են լսել խորհրդականներին, արտգործնախարարութեան մասնագէտներին, ովքեր կարծում են, թէ Թուրքիային դուր չի գայ, որ Բրիտանիան ճանաչի ցեղասպանութիւնը: Բայց որքան աւելի շատ միջազգային իրաւաբաններ ապացուցեն, որ իրաւաբանօրէն դա ցեղասպանութիւն էր, այնքան քաղաքական ղեկավարները աւելի քիչ կ՚ընդդիմանան ցեղասպանութեան ընդունմանը»:

Ըստ իրաւաբանի, Մեծ Բրիտանիան տարիներ շարունակ հերքել է հայերի ցեղասպանութեան փաստը՝ բերելով մի քանի անհիմն պատճառաբանութիւն, թէ չկան անհերքելի փաստեր, որոշ պատմաբաններ չեն հաստատում եղելութիւնը եւ այլն: Աւելին՝ արտգործնախարարութիւնը առանց լուրջ ուսումնասիրութիւնների ղեկավարներին, խորհրդարանականներին բազմիցս խորհուրդ է տուել չընդունել ցեղասպանութիւնը, նոյնիսկ չմասնակցել ցեղասպանութեան յիշատակման միջոցառումներին:

Սակայն Ռոբերթսոնը չեշտեց, որ իր իրաւաբանական կարծիքի հրապարակումից յետոյ հասարակական քննարկումների արդիւնքում փոփոխուել է նաեւ արտգործնախարարութեան մօտեցումը. այլեւս հարցականի տակ չի դրւում փաստը, պարզապէս խուսափում են այն ցեղասպանութիւն կոչել՝ ասելով, թէ հասկացութիւնը ձեւակերպուել է հայերի ջարդից շատ աւելի ուշ:

Ջեֆրի Ռոբերթսոնը լաւատեսօրէն է տրամադրուած նոր կառավարութեան նկատմամբ. - «Պիտի նշեմ, որ պահպանողականների եւ յատկապէս լիբերալ-դեմոկրատների կողմից դրական վերաբերմունք ու աջակցութիւն կայ: Լիբերալ-դեմոկրատների քայլերը յարգանքի են արժանի շնորհիւ լորդ Էյվբուրիի, ով երկար տարիներ ղեկավարել ցեղասպանութեան ճանաչման խորհրդարանական նախաձեռնութիւնը: Բարոնուհի Քոկսը պահպանողական է, նա էլ միշտ աջակցել է ճանաչմանը գործընթացին: Կարծում եմ, նոր իշխանութեան օրօք արտաքին գործերի նախարարութիւնն աւելի շատ բացատրութիւններ կը տայ, քանի որ պահպանողականները կարեւորում են էթիկան արտաքին յարաբերութիւններում: Իհարկէ, իշխանութիւնը չի ցանկանայ շատ վշտացնել Թուրքիային, բայց յաջորդ անգամ, երբ բարձրացուի ցեղասպանութեան հարցը, կարծում եմ, որ աւելի ազնիւ պատասխաններ կը ստանանք»:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐԸ ԱՊՕՐԻՆԻ ԿԵՐՊՈՎ ՆԵՐԳՐԱՒՈՒԱԾ ԵՆ

Շարունակուած էջ 1-էն

թայթած են այս տեղեկութիւնները հաստատող լուսանկարներ եւ տեսաժապաւէններ:

Ըստ զեկոյցի, գոյութիւն ունին փաստական նիւթեր, որ բանակի ստորաբաժանումները Մարտի 1-ի ժամը 16:09-ին տեղակայուած են Հանրապետութեան հրապարակի վրայ, 16:11-ին: Տիգրան Մեծ պողոտային հարող շուկայի դիմաց, իսկ ժամը 18:14-ին Պաշտպանութեան նախարարութեան նոր ստորաբաժանումներ բերուած են Հանրապետութեան հրապարակ: Մէկ այլ լուսանկարով կ՚երեւի, թէ ինչպէս ժամը 16:27-ին Մելիք Ադամեան փողոցի վրայ բանակի ստորաբաժանումները կը զինուին ինքնաձիգներով եւ հոն է նաեւ Երեւանի կայազօրի պետ Եուրի Խաչատուրովի ծառայողական մեքենան:

Փաստահաւաք խումբի հարցումներին ի պատասխան Եուրի Խաչատուրով 2008-ի Նոյեմբեր 21-ին հերքած է Մարտի 1-ի իրադարձութիւններուն պաշտպանութեան նախարարութեան որեւէ ստորաբաժանումի մասնակցութիւնը, իսկ Մարտի 1-ի առաւօտեան, կէսօրին եւ երեկոյան Երեւանի տարբեր մասերուն մէջ նախարարութեան համարանիշներով բեռնատար մեքենաներու տեղակայումը բացատրուած է այնպէս, որ այդ մեքենաները դրուած են ոստիկանութեան տրամադրութեան տակ. ոստիկանապետը բանաւոր խնդրած է եւ, պաշտպանութեան նախարարի բանաւոր կարգադրութեամբ, մօտ 50 փոխադրամիջոց տրամադրուած է ոստիկանութեան՝ իրենց վարորդներով:

«Դա աբսուրդ է: Այդպէս չէ, որ բանաւոր հրամանով բանակի եղած-չեղածը տեղափոխւում է մէկ այլ ուժային կառոյց: Այդպիսի կարգ չէր կարող լինել», - «Ազատութիւն» ռատիոկայանին յայտարարած է Անդրանիկ Քոչարեան: «Առաւել եւս, որ մեր ձեռքի տակ փաստերը հիմք են տալիս ասելու, որ այդ տրանսպորտային միջոցների մէջ մենք տեսնում ենք բանակի համազգեստով զինուորականներ: Դա մեզ հիմք է տալիս մտածելու, որ Մարտի 1-ի առաւօտեան համապատասխան բանակային ստորաբաժանումներին տեղափոխել են Երեւան տարբեր տեղերից»:

Փաստահաւաք խումբի ընդդիմադիր անդամներ Անդրանիկ Քոչարեանն ու Սեդա Սաֆարեանը կ՚եզրակացնեն, որ այսպիսով հիմք կայ պնդելու, որ խախտուած են Սահմանադրութեան եւ պաշտպանութեան մասին օրէնքի համապատասխան դրոյթները, որոնք կ՚արգիլեն բանակի մասնակցութիւնը երկրի ներքաղաքական կեանքին:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին Անդրանիկ Քոչարեանը, մասնաւորապէս, կարծիք յայտնած է, որ յիշեալ գործողութիւնները կրնային իրականացուիլ միայն Ռոբերդ Քոչարեանի ուղղակի ցուցմունքով, քանի որ Պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեան նման լիազօրութիւններ չունէր:

Մարտի 1-ի իրադարձութիւնները ուսումնասիրող խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովը նախագահ Սամուէլ Նիկոյեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է, որ ծանօթ չէ ընդդիմադիրներու հրապարակած զեկոյցին:

## ՌՈԼՖ ԲԻՈՆԿԷ. «ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՋԱԿՑԵԼ՝ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՆ ԱՒԵԼԻ ԱԶԱՏ»

«Մենք կարող ենք աջակցել՝ դարձնելու հայաստանեան տնտեսութիւնն աւելի մրցակցային, աւելի ազատ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Հայաստանում Եւրամիութեան խորհրդատուական խմբի ղեկավար Ռոլֆ Բիոնկէն:

«Պարզ է, որ այն տնտեսութիւնը, որն ունի մրցակցային համակարգ, զարգանում է աւելի արագ ու լաւ, քան այն, որը կենտրոնացած է մի քանիսի ձեռքերում», - ընդգծեց նա:

Անցած տարուայ Հոկտեմբերին Համաշխարհային բանկի կառավարիչ-տնօրէն Նգոզի Օկոնջօ-Իվիլան Երեւանում յայտարարել էր, որ հայաստանեան տնտեսութիւնն ունի օլիգոպոլ կառուցուածք, այդ գնահատականը կրկնել է նաեւ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը:

«Մենք աջակցում ենք՝ ուժեղացնելու ոչ միայն մրցակցային տարրը, այլեւ նպաստում ենք առեւտրի զարգացմանը, որը միջոցներից մէկն է եւ որը տնտեսութիւնը դարձնում է աւելի առողջ», - նշեց Ռոլֆ Բիոնկէն՝ յաւելելով. - «Բայց միւս կողմից՝ սա բաւականին բարդ հարց է: Իհարկէ, Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ Հայաստանը գտնուել է տրանսֆորմացիայի մէջ, եւ այժմ վերակառուցման փուլն է»:

Հայաստանի համախառն ներքին արդիւնքի եւ արտաքին պարտքի յարաբերակցութեան վերաբերեալ հարցին՝ արդեօք արտաքին պարտքի ծաւալների աճը չի՞ մօտեցել վտանգաւոր սահմանագծին, Եւրամիութեան խորհրդատուական խմբի ղեկավարը արձագանքեց. - «Իհարկէ, սահմանագիծ գոյութիւն ունի, որից յետոյ արտաքին փոխառութիւնը դառնում է բեռ տուեալ կառավարութեան համար եւ սկսում է շատ միջոցներ կլանել բիւջէից: Բայց Հայաստանը չի հասել այդ փուլին, եւ ձեր ֆինանսների նախարարութիւնն էլ շատ ուշադիր հետեւում է գործընթացին: Եւրամիութեան խորհրդատուական խումբն էլ, իր հերթին, աջակցութիւն է ցուցաբերում՝ ձեռնարկելու այն միջոցները, որոնք կիրառւում են Եւրոպական միութիւնում»:

Եւրամիութեան խորհրդատուական խումբը Հայաստանում գործում է արդէն շուրջ մէկ տարի:

**ՀԵՐՈՍԱՄԱՐՏ**

# ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ 22-26 ՄԱՅԻՍ 1918

*ԱՐՄԷՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ*

*Աւարայրի ճակատամարտէն 15 դար յետոյ, դարձեալ Մայիս ամսուայ մէջ, երկրորդ Վարդանանց մը տեղի ունեցաւ՝ այս անգամ յանուն հայ ազգի փրկութեան: Արձանագրուեցաւ մեր պատմութեան փայլուն էջերէն մին՝ Սարդարապատի հերոսամարտի փառաւոր յաղթանակը:*

*Մահու-կենաց ճակատամարտ մղուեցաւ Թուրքին դէմ, որ երեք տարի առաջ Արեւմտեան Հայաստանի հայութիւնը ջարդած, ծովուն մէջ խեղդած, եկեղեցւոյ մէջ այրած, հիւանդանոցներու մէջ թունաւորած, աքսորի ճամբաներուն վրայ կիներն ու աղջիկները լլկած, յղիները սուինահարած, որբերը թրքացուցած էր: Օսմանեան կայսրութեան հպատակ հայութիւնը ցեղասպանութեան ենթարկած էր: Հայաթափ դարձուցած էր բովանդակ Արեւմտեան Հայաստանը: Այժմ եկած էր Արարատեան դաշտ, բնաջնջելու Արեւելահայաստանի հայութիւնը՝ Թուրանի ճամբուն վրայ կեցած հայութեան վերջին մասը: 1914 Դեկտեմբերի վերջին եւ 1915 Յունուարի առաջին օրերուն, յոխորտ Էնվէրի Սարիղամիշի մէջ խորտակուած 120 հազարնոց բանակին տեղ, Գերմանիոյ մէջ զինուորական կրթութիւն ստացած, շատ աւելի փորձառու, հայ իրականութեան քաջածանօթ քաղաքագէտ ֆերիկ (մարաջախտ) Վէհիպի հրամանատարութեամբ Թուրքը եկած էր իր երազը իրականացնելու:*

*Թուրքը իր այս երազը թաքցնելու կարիքը երբեք չէ զգացած: Իթթիհատ եւ Թէրրաքի կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամներէն Տօքթ. Պահաթթին Շաքիր եւ ծովային նախարար Ճէմալ փաշան իրենց նպատակը, Պաթումի մէջ, Անդրկովկասի ներկայացուցիչներուն հետ 30 Մայիս 1918-ին սկսած խորհրդաժողովի ճաշկերոյթին, Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդի ներկայացուցիչներու նախագահ Ալեքսանտր Խատիսեանին բացայայտօրէն ըսած են. «Հայերը կանգնած են մեր համիսլամական եւ համաթրքական սրբազան նպատակներուն իրականացման ճամբուն վրայ եւ մենք անխուսափելիօրէն կը բախինք անոնց հետ: Ատիկա վեր է եւ դուրս է մեր անձնական զգացումներէն ու տրամադրութիւններէն: Մենք ստիպուած ենք տարերայնօրէն ոչնչացնել մեր ճամբու վրայէն այն ամէնը, ինչ-որ արգելք կը հանդիսանայ մեր ազգային նպատակներուն: Եւ յետոյ դուք միշտ ռուսերուն հետ էք, իսկ ռուսերը մեր ոխերիմ թշնամիներն են: Պատմական թշնամիները»:*

*Այդ օրերու երազէն, կացութենէն եւ տրամադրութենէն ոչինչ փոխուած է: Թուրքը, այսօր ալ նոյն երազը ունի: Այդ երազին հասնելու համար ալ Կովկասի եւ Ասիոյ Թրքալեզու, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի իսլամ հանրապետութիւններուն հետ սերտ յարաբերութիւններ կը մշակէ:*

*Ո՛չ օսմանցի Թուրքը հայուն եւ Հայաստանի գոյութեան կրցած էր հանդուրժել, ոչ ալ այսօրուայ հանրապետական Թուրքը կը հանդուրժէ: Թէեւ այժմու քաղաքական պայմանները չեն թոյլատրեր որ թրքական բանակը սահմանը անցնի, սակայն սահման փակելով, շրջափակում ստեղծելով ջանալ Հայաստանի Հանրապետութիւնը տնտեսապէս փլուզումի ենթարկել, Թուրքիոյ մէջ առանց արտօնութեան աշխատող զանազան երկիրներու հպատակ գործաւորներէն միայն ՀՀ հպատակները երկրէն հեռացնել սպառնալ, անհանդուրժողականութեան անվիճելի փաստերն են:*

*Թուրքը, իր նպատակին հասնելու՝ Անդրկովկասին տիրելու համար, 12 Փետրուար 1918-ին յարձակումի կ'անցնի Արեւելեան Հայաստանի վրայ՝ խախտելով Թրքական զօրքերու հրամանատարութեան ու Անդրկովկասի Կոմիսարութեան միջեւ 18 Դեկտեմբեր 1917-ին ստորագրուած Երզնկայի զինադադարը, ու Փետրուար 13-ին կը գրաւէ Երզնկան, Փետրուար 27-ին՝ Կարինը եւ Ապրիլ 5-ին ա՛լ Սարիղամիշը:*

Գէորգ Ե. Սուրէնեան
Կաթողիկոս Ամենայն Հայոց



*Անդրկովկասի կառավարութիւնը՝ Սէյմը, 1918-ի Ապրիլի 22-ին Անդրկովկասը անկախ յայտարարելէ յետոյ, Թուրքերը կը խախտեն նաեւ 16 Մարտ 1918-ին, Սովետական Միութեան ու Քառեակ Միութեան Երկիրներու (Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Պուլկարիա եւ Թուրքիա) խմբակին միջեւ ստորագրուած «Պրեսթ-Լիթովսք»-ի դաշնագիրը, ու Ապրիլի 25-ին կը գրաւեն Կարսը եւ Մայիսի 15-ին ալ՝ Ալեքսանդրապոլը, ձեռք անցընելով այդ քաղաքներու մէջ գտնուող հայոց չօշափելի քանակութեամբ պահեստներն ու զինամթերքը: Կը կողոպտեն ու կը ջարդեն անզէն ու անպաշտպան բնակչութիւնը ու կը սկսին յառաջանալ դէպի հայրենիքի սիրտը՝ Արարատեան դաշտ՝ Երեւան, Էջմիածին:*

*Արեւելեան Հայաստանի հայութեան ֆիզիքական գոյութիւնը կը դառնայ օրհասական:*

*21 Մայիսին կաթողիկոսին կ'առաջարկուի Էջմիածնէն հեռանալ: Գէորգ Ե. Սուրէնեան կը մերժէ պապերէն աւանդ մնացած Մայր Աթոռէն հեռանալու առաջարկը: «Եթէ հայ ազգն ու անոր զինուորութիւնը չեն կրող պաշտպանել իրենց սրբութիւնները, ապա թող ես այստեղ նահատակուիմ, Ս. Գրիգոր Լուսաւորչի հիմնադրած տաճարին մէջ» կ'ըլլայ պատուական Հայրապետին պատասխանը:*

*Կաթողիկոսի հրահանգով, Էջմիածնէն մինչեւ Սեւան, Արաքսէն մինչեւ Արագածի լանջերը եօթը օր, եօթը գիշեր եկեղեցիներու եւ վանքերու զանգակները կը ղօղանջեն, ժողովուրդը կանչելով ինքնապաշտպանութեան ու թշնամին հակահարուածելու:*

Գարեգին Ա. Յովսէփեանց
Կաթողիկոս Մեծի Տանն
Կիլիկիոյ



*Մայիս 22-ի առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ երկու եպիսկոպոսներ, մին՝ գրքի ու գիտութեան մարդ, ճեմարանի տեսուչ, յայտնի հայագէտ, պերճախօս Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանց, հետագային Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Կաթողիկոսը (1943-1952), միւսը՝ Կարնոյ առաջնորդ, մինչեւ Արարատեան դաշտ գալը յաճախ ռազմաճակատի առաջին գիծերուն վրայ գտնուած ղարաբաղցի Զաւէն Եպիսկոպոս Մահտեսի-Պապայեան, Էջմիածնի շուրջի գիւղերու ժողովուրդին կը բացատրեն թշնամիին անողոքութիւնը, վտանգին մեծութիւնը, յաղթելու կամ հայրենի սրբազան հողին վրայ պատիւով մեռնելու անհրաժեշտութիւնը: Անոնք կը խրախուսեն աշխարհազօրայինները եւ խաչը ձեռքերնին, զանոնք կ'առաջնորդեն դէպի կռիւ:*

Գնդապետ
Դանիէլ բէկ Փիրումեան



*Թադէոս եւ Դանիէլ վարդապետներու, ինչպէս նաեւ Աղթամարի միաբաններէն, Վանի ինքնապաշտպանութեան կռիւներուն մասնակցած յայտնի նշանաձիգ Եզնիկ Վարդապետի առաջնորդութեամբ 500 պատանքաւորներ Սարդարապատի կռիւներուն կը մասնակցին:*

*Մայիսի 22-ը կ'ըլլայ յաղթանակի օր: Հայկական զօրքը գնդա-*

*Շար.ը էջ 17*




ՄԱՅԻՍ 22-Ի ԵԼՈՅԹԸ ԿԸ ՀՈՎԱՆԱՒՈՐԷ
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

# ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ

*ՇԱՀԷ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ*
*(Գալիֆորնիայի Նահանգային Խորհուրդի 43–րդ Ընտրատարածքի Թեկնածու)*

*Այսու կ'ուզեմ յայտնել մեր համայնքի բոլոր անդամներուն, որ խորհրդատուներուս, ընկերներուս եւ ընտրարշաւիս անմիջական աջակիցներուս հետ խորհրդակցելէ ետք, որոշեցի դադրեցնել Գալիֆորնիայի Նահանգային Խորհուրդի անդամութեան իմ թեկնածութիւնը: 43րդ Ընտրատարածքի նախկին ներկայացուցիչ Փոլ Գրիգորեանի այս պաշտօնէն կիսաւարտ հեռանալուն հետեւանքով ստեղծուած՝ տարօրինակ եւ քուէարկողը շփոթեցնող ընտրութիւններու ընթացքը (երկու քուէարկութիւն նոյն օրը) կը նշանակէ որ Դեմոկրատ կուսակցութեան թեկնածուները պիտի պայքարին թէ՛ իրարու եւ թէ Հանրապետական կուսակցութեան թեկնածուին դէմ: Որպէս Դեմոկրատ՝ ես պիտի չուզէի մաս կազմել նման ընտրապայքարի: Ուստի, Դեմոկրատ կուսակցութեան միասնականութիւնն ու ընտրութեանց յաղթանակը ապահովելու նախանձախնդրութեամբ՝ ես կը դադրեցնեմ իմ ընտրարշաւը:*

*Վստահաբար պիտի գտնուին մարդիկ որ անտրամաբանական եւ երեւակայածին մեկնաբանութիւններ պիտի տան իմ այս որոշումին առնչութեամբ: Ասոնք նոյն այդ անհատներն են որոնք անտրամաբանական եւ երեւակայածին մեկնաբանութիւններով դատապարտեցին այս ընտրարշաւին իմ մասնակցութիւնը...: Այդ իսկ պատճառով, կ'ուզեմ այս առիթով միանգամընդմիշտ բոլորին յիշեցնել իմ թեկնածութեան վերաբերող իրողութիւնները:*

*Այսպէս. 43րդ Ընտրատարածքի ներկայացուցիչի պաշտօնին իմ թեկնածութիւնը առաջադրեցի հիմնուած ըլլալով 2009 թուականին Կլենտէյլի Քաղաքային Խորհուրդի ընտրութիւններուն ին ապահոված բարձր արդիւնքին վրայ: Արդարեւ՝ այդ ընտրութիւններուն, միայն մէկ քաղաքի մաշտապով, ես ապահոված էի մօտաւորապէս 7,000 քուէ: Իմ ակնկալութիւնն էր, որ Պըրպէնք եւ Նորթ Հոլիվուտ քաղաքներու յաւելումով՝ ուր հայ բնակչութեան հսկայ զանգուած կ'ապրի՝ ես պիտի կարենայի մի քանի հազար քուէ եւս ապահովել: Տեղին է նշել որ Դեմոկրատ թեկնածուներու պարագային ամենէն բարձր քուէ ստացողը ապահովեց շուրջ 12,000 ձայն:*

*Փաստացի իրողութիւն է, այնպէս ինչպէս Լոս Անճելոս Գաւառի Քարտուղարութեան տուեալները եւս կ'ապացուցեն, որ իմ թեկնածութիւնը ես պաշտօնապէս յայտարարեցի 22 Դեկտեմբեր 2009ին: Այն ժամանակ ես երկրորդ անձն էի որ կը յայտարարէր իր թեկնածութիւնը, Մայք Կաթոյէն ետք, եւ ես, ինչպէս ոեւէ անձ, որեւէ գաղափար չունէի թէ ուրիշ ովքեր պիտի*

*Շար.ը էջ 18*

# «ՆՈՐ ՕՐ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 88ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

*Շաբաթ, 15 Մայիս, 2010, երեկոյեան ժամերուն տեղի ունեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան պաշտօնաթերթ «Նոր Օր»ի 88րդ տարեդարձի ճաշկերոյթ–պարահանդէսը «Պէչկէօթիւրեան» վերանորոգ սրահէն ներս, Փասատինա:*

*Սրահը ծաղկեցուցած էին համակիրներ, ՌԱԿի պատասխանատուներ, անդամներ եւ գաղութի հայկական պաշտօնաթերթերու խմբագիրներ եւ լրագրողներ:*

*Օրուայ հանդիսավար՝ Յովիկ Եօզկաթլեանի բարի գալուստի մաղթանքներէն ետք օրհնութեան աղօթքներով եւ բարեմաղթանքներով հանդէս եկան Տ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեան եւ Տ. Սարգիս Քհնյ. Փեթոյեան, որոնցմէ ետք իր սրտի խօսքը փոխանցեց Տօքթ. Ռաֆֆի Պալեան, «Նոր Օր»ը մասունք նկատելով եւ անդրադառնալով անոր մեծ դերին հայ գիրի, մշակոյթի եւ հայ ազգի պահպանման դժուար ուղիին մէջ: Նոր յուսադրումներով եւ ակնկալութիւններով «Նոր Օր»ը մեր խօսքն է, մեր միտքը, ձայնը եւ պատիւը եւ մենք կը հաւատանք անոր առաքելութեան եւ ազգօգուտ նպատակին» ըսաւ ան:*

*Խօսք առաւ «Նոր Օր»ի խմբագիր Պրն. Մինաս Գոճայեան, անդրադառնալով ՌԱԿ–ի օրկան «Նոր Օր»ի գոյատեւման մասին, ան շեշտեց մեծ զոհողութիւններու, նիւթական եւ բարոյական ներդրումներու եւ ծառայութեանց կարեւորութիւնը: Ան յատկապէս գնահատեց «Նոր Օր»ի ընթերցողը եւ թերթ–ընթերցող հասկացողութիւնը:*

*Ջութակի գեղեցիկ մեղեդիներով հանդէս եկաւ Յովիկ Մեղրիկեան, խանդավառութիւն ստեղծելով սրահէն ներս, որմէ ետք երեկոն խանդավառեց սիրուած երգիչ Դաւիթ Սամուէլեան եւ իր նուագախումբը:*

*Հիւրաբար ներկայ էր նաեւ երգիչ Խաչիկ Ջէնեանը, որ իր իւրայատուկ եւրոպական երգերու մեկնաբանութեամբ գրաւեց բոլոր ներկաներուն ուշադրութիւնը:*

*Երեկոյի յատուկ բաժնի մաս կը կազմէր «Արմինիըն Օպզըրվըր» թերթի գլխաւոր խմբագիր Օշին Քէշիշեանի ելոյթը: Ան ներկաներուն յայտնեց թէ ինք եղած է «Նոր Օր»ի խմբագիր 1959–1961 թուականներուն: Պրն. Քէշիշեան շնորհաւորեց «Նոր Օր»ը, անցած տարիներու դժուարին ճանապարհը եւ գնահատեց աշխատողներու նուիրուածութիւնը եւ զոհողութիւնը այս ազգօգուտ գործին մէջ:*

*Տեղին է գնահատել նաեւ «Նոր Օր»ի Տիկնանց Օժանդակ Մարմնի աշխատանքները այս երեկոյի եւ ձեռնարկի յաջողութեան մէջ:*

*Շնորհաւոր 88րդ դարեդարձ եւ կանանչ ճանապարհ «Նոր Օր»ին:*

*Բոլորին վարձքը կատար:*

*Լ.Մ.*

Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

**AGBU Vatche and Tamar Manoukian High School**

Նոր Աշակերտներու Արձանագրութիւն, 9րդ–12րդ Դասարաններ

***New Student Enrollment, Grades: 9-12***

- ✓ College Preparatory Academic Program
- ✓ Honors or Advance Placement (AP) Level Instruction in all subject areas
- ✓ Small Class Sizes and Individual Attention
- ✓ Visual Performing Arts Program in Dance, Drama, Theater, Music and Choir
- ✓ Comprehensive Armenian Curriculum
- ✓ Technology and Computer Program
- ✓ College Counseling and Admissions Guidance
- ✓ Co-curricular and Extra-Curricular Activities including Competitive Sports
- ✓ Safe and Secure Closed Campus

Կրթաթոշակներ տրամադրելի են այն աշակերտներուն, որոնք ուսումնական բացառիկ յաջողութիւն ցուցաբերած են, ինչպէս նաեւ գերազանց ընդունակութիւն ունին հետեւեալ մարզերէն ներս.–

Հայագիտութիւն – «Technology» – Երաժշտութիւն – Թատրոն – Պարարուեստ

Ձեր Զաւակներուն Համար Կատարեցէք Լաւագոյն Ընտրութիւնը

Ուսում, Կրթութիւն, Յաջողութիւն

**Call: (626) 794-0363**
**We are located at 2495 E. Mountain St, Pasadena, CA 91104**

# ԳԱԼԻՖՈՐՆԻԱՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿ



**Տ. Ա. ՎԱՆԱՏՈՒՐ**

Ընթացիկ տարուան Մայիսի 1-ին տեղի ունեցաւ համանուն Միութեան հիմնադրութեան 25-ամեակի ճաշկերոյթ պարահանդէսը, Հիլթըն պանդոկի շքեղազարդ պարասրահին մէջ, Կլենտէյլ:

Աւելի քան 500 հոգիներու մէջ, իրենց ներկայութեամբ աչքի կը զարնէին Ծերակուտական Գարոլ Լիու, գոնկրեսական ծուտի Ջու, Ատամ Շիֆի ներկայացուցիչ Մէյրի Յովակիմեան, Մայքըլ Անթոնովիչի կողմէ Ռիթա Հաճիմանուկեան, ոստիկանապետ Լի Պաքա,



**Տօքթ. Վիգէն Սեփիլեան**

Լերի Զարեան եւ Տօքթ. Լաուրընս Նաճարեան՝ Նիու Ծըրզիէն:

Գալիֆորնիահայ Բժշկական Միութեան նախագահ, հանրածանօթ երիտասարդ բժիշկ Տօքթ. Վիգէն Սեփիլեան իր բարի գալուստի հանդամանաւոր խօսքէն ետք, յատուկ կերպով համանուն միութեան հիմնադիր անդամներուն անունները յիշատակեց, որոնք եղած էին, բժիշկներ Տօքթ. եւ Տօքթ. Միսաք Պարսամեան, Յարութիւն Սաղրեան (մահացած) եւ Ժան Մոմճեան: Ան նոյնպէս յիշատակեց նախկին նախագահներուն անունները՝ ինչպէս Տօքթ. Թ. Կրեկորի Գիրիանօֆ, Պետրոս Գոճեան, Սիլվա Գարշիկեան, Միսաք Ապտիլեան, Դաւիթ Տաւթեան, Արմէն Ծերիկ, Պօրսի Պաղտասարեան եւ Վարուժ Ալավերտեան:

Տօքթ. Վիգէն Սեփիլեան դիտել տուաւ թէ ընթացիկ տօնական գիշերուան նպատակը կը կազմէ օգնել Հայաստանի չաքարախտէ վարակուած փոքրերուն, Հայաստանի Գալիֆորնիահայ Բժշկական Միութեան նախաձեռնութեան տակ, որ կը ղեկավարուի Տօքթ. Սիլվա Գարշիկեանի կողմէ, գործակցութեամբը Տօքթ. Տօքթ. Մարք Նազարեանի եւ Սէմ Մալայեանի:

Տարիներու ընթացքին անոնց տարած հսկայական աշխատանքին կապակցութեամբ՝ Տօքթ. Սեփիլեան յայտնեց իր շնորհաւորութիւնները եւ գնահատեց անոնց զոհողութեան ոգին, որ լաւագոյնս բարելաւեց առողջապահական ծառայութիւնները Հայրենիքի եւ սփիւռքի մէջ:

Շնորհազարդ բժիշկը տաւացիօրէն շնորհակալութիւն յայտնեց միութեան կազմակերպուած ներկայ ճաշկերոյթին իրենց մասնակցութիւնը բերող անդամներուն, զօրակցողներուն, նուիրատուներուն եւ հիւրերուն, որոնք իրենց ներկայութեամբ քաջալեր հանդիսացան յոբելիար բժշկական միութեան:

Առ ի գնահատութիւն Գալիֆորնիահայ Բժշկական Միութեան ծաւալած մարդասիրական բարձր առաքելութեան գնահատական նամակներ կարդացուեցան, նամակներ, որոնք ղրկուած էին նահանգային պետերու կողմէ:

Արդարեւ, Գալիֆորնիոյ Ծերակուտական ժողովի պաշտօնագիրը ներկայացուց Ծերակուտական ծօ Սիմիթեան եւ Գալիֆորնիոյ Նահանգի գնահատագիրը կարդաց գոնկրէսական ծուտի Շու: Նահանգապետ Արնոլտ Շուարձնեկըրը կը յայտնէր իր հպարտութիւնը ի տես Գալիֆորնիահայ Բժշկական Միութեան ուրիշներուն օգնելու անոր ծաւալած մարդասիրական ծառայութեան եւ նուիրումին համար:

Ատամ Շիֆ իր հիացմունքը կը յայտնէր Միութեան տարած անխոնջ այլ յուսադրիչ աշխատանքին համար:

Լոս Անճելըսի Շրջանի իրաւաբանական կաճառի կողմէ Սթիվ Գուլի, Լոս Անճելըս գաւառի վերատեսուչ Մ. Անթոնովիչ եւ գոնկրէսական Փոլ Գիրգորեան՝ կու գային բարձրօրէն գնահատել Բժշկական Միութեան հիմնադիր բոլոր անդամները եւ անոր նախագահները:

Բաց աստի, սրահէն ներս տիրող տօնական խանդավառութիւնը առաւել եւս մեծցաւ երբ յայտարարուեցաւ հիմնադրութիւնը ի յիշատակ Տօքթ. Նորիկ Պօղոսեանի՝ «Նորիկ Պօղոսեան Կրթական Հիմնադրամ»ի որ պիտի յատկացուէր «գեղագիտական» (plastic) եւ «վերամաշկաւորման» (reconstructive) վիրաբուժութեան հետեւող ուսանողներուն: Բժիշկ Պօղոսեանի այրին՝ Տիկ. Հիլտա Պօղոսեան եւ երեք զաւակները Լարա, Ալէք եւ Արման շնորհակալութիւն յայտնեցին Գալիֆորնիոյ Բժշկական Միութեան, որ օգնեց այս հիմնադրամի

Շար.ը էջ 18

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Արեւմտեան Թեմի Մայր Տաճարի օծման համրուած շաբաթներ մնացած են: Մայր Տաճարի շինարարական աշխատանքները մօտենալով իրենց աւարտական հանգրուանին, շարք մը միջոցառումներ նախատեսուած են տօնակատարելու համար պատմական այս իրադարձութիւնը:

Շաբաթ, Յունիս 19, 2010-ին, Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբը պիտի կազմակերպէ «Յաղթանակի Օր» ճաշկերոյթ-պարահանդէս մը, որ գլխաւոր դրամահաւաք միջոցառումը պիտի ըլլայ նպաստելու Մայր Տաճարի կառուցման: Այս ճաշկերոյթը պիտի ըլլայ ամէնէն կարեւոր դրամահաւաք միջոցառումը եւ ցոյց պիտի տայ հաւատացեալ ժողովուրդին յանձնառութիւնը Թեմի Մայր Տաճարին: Հանգանակիչ Յանձնախումբի ատենապետ Պրն. Անդրանիկ Ջօրայեան հաստատեց. «Թեմի հաւատացեալ ժողովուրդին կոչ կ'ուղղենք մասնակցելու այս սքանչելի միջոցառումին եւ քաջալերել զայն: Այսօր, մենք ականատեսը կ'ըլլանք այն հունտերուն պտղաբերումին, որոնք ժամանակ մը առաջ մենք ցանած էինք, եւ Աստուծոյ կամքով, քանի մը շաբաթներ ետք հաւատացեալ մեր ժողովուրդը պիտի աղօթէ, երիտասարդ հայ զոյգեր իրենց ուխտը պիտի փոխանակեն եւ մեր երեխաները պիտի մկրտուին այս գեղեցիկ սրբավայրին մէջ», աւելցուց Ջօրայեան:

Գլխաւոր այլ տօնակատարութիւն մը պիտի ըլլայ նախաօծման՝ Նաւակատիքի արարողութիւնը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Օգոստոս 14, 2010-ին: Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան պիտի նախագահէ Մայր Տաճարէն ներս կատարուող օրհնութեան եւ գոհաբանական արարողութիւններուն: Հաւատացեալ ժողովուրդը հրաւիրուած է ներկայ գտնուելու Նաւակատիքի արարողութեան, որուն պիտի յաջորդէ մշակութային յայտագիր մը:

Կը փափաքինք յիշեցնել հաւատացեալ համայն հայութեան, թէ Մայր Տաճարի Ս. Օծման արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, Սեպտեմբեր 11, 2010-ին, Նախագահութեամբ Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցութեամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ աւելի քան տասներկու Արքեպիսկոպոսներու, որոնք աշխարհի չորս ծագերէն պիտի ժամանեն, մասնակիցը դառնալու համար պատմական այս միջոցառումներուն: Սուրբ եւ Անմահ Պատարագ պիտի մատուցուի Կիրակի, Սեպտեմբեր 12, 2010-ին, որուն պիտի յաջորդէ ճաշկերոյթ-տօնակատարութիւն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի գրասենեակ (818-558-7474):

**ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ**

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN



Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association

A.B.A. INSURANCE SERVICES

(818) 500-9585

CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ



*Մեր դպրոցէն ներս գեղեցիկ սովորութիւն մը դարձած դպրոցական երկլեզու շարադրական այս տարուան մրցանքի թեման Հայկական Ցեղասպանութիւնն էր, անոր 95 ամեակին առիթով: Աշակերտները կրնային իրենց կարծիքները արտայայտել չորս տարբեր նիւթեր արծարծելով՝*

*ա. Եթէ առիթը ունենայիր Թուրքիոյ նախագահին հետ հանդիպելու ի՞նչ կ՚ըսէիր իրեն,*

*բ. Տղեկ մը կամ աղջնակ մըն ես, որ կը բնակիս Արեւմտեան Հայաստանին մէջ եւ օրագրութիւն կը պահես եւ թուականը Ապրիլ 24, 1915 է, ինչ պիտի գրէիր*

*գ. Ինչո՞ւ տակաւին մենք պէտք է յիշենք Ապրիլ 24,*

*դ. Հայապահպանման համար ինչո՞ւ կարեւոր է հայերէն լեզուն գիտնալը:*

*Մանկապարտէզէն մինչեւ Ը. կարգի աշակերտները երկու պահերու ընթացքին գրեցին իրենց շարադրութիւն ները, որոնցմէ ընտրուեցան առաջին եւ երկրորդ հանդիսացողները: Այս երկլեզու շարադրութիւնները հրատարակուեցան դպրոցիս աշակերտական գրական պարբերաթերթին՝ «Լուսաւորում»ին մէջ, որ նուիրուած էր Ցեղասպանութեան 95 ամեակին: Մանկապարտէզի աշակերտները անշուշտ գծագրութեամբ արտայայտեցին իրենց ապրումներն ու կարծիքները:*

